ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4751-Ա «09» դեկտեմբերի 2024 թ.

«ԱՐՑԱԽ» ԹԱՂԱՄԱՍԻ Հ.63 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Միսակ Մադաթյանի լիազորված անձ Լուսինե Շախբազյանի դիմումը՝ «Արցախ» թաղամասի հ.63 հասցեում գտնվող հողամասի սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել Երևան քաղաքի ժողովրդական պատգամավորների Էրեբունու շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 1994 թվականի հոկտեմբերի 27-ի հ.41/7 որոշումը, 2024 թվականի հունիսի 3-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.5200 լրացուցիչ վկայագիրը, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 2023 թվականի ապրիլի 21-ի հ.Հ-5171 և 2023 թվականի մայիսի 15-ի հ.Հ-6226/3 տեղեկանքները:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ «Արցախ» թաղամասի հ.63 հասցեում գտնվող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 392.53քմ՝ փաստաթղթերում ամրագրված՝ 400.0քմ մակերեսի փոխարեն:

Քննարկվող՝ 392.53քմ մակերեսով հողամասն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ գտնվում է Երևան քաղաքի հողերի տարածագնահատման համաձայնեցված սխեմայի 5-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 11.10.2024թ. հ.Դ-121978-24 եզրակացությունը.

1. Սահմանել, որ «Արցախ» թաղամասի հ.63 հասցեում գտնվող հողամասի սահմանները որոշվում են 392.53քմ մակերեսի համար սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ «Արցախ» թաղամասի հ.63 հասցեում գտնվող 392.53քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը

/կատեգորիան/ սահմանել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը /օգտագործման նպատակը/՝ բնակելի կառուցապատման:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում:

4. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

6. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ